

ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՀԱԿՅԱՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ

Զրույց Ամենայն Հայոց կիթողիկոս Վազգեն Առաջինի հետ, որ հայրենասիրական-խաղաղասիրական գործունեության համար պարգևատրվել է «Պատվո նշան»-ով:

Վեհափառը հյուր կանչեց ինձ,
հյուրասիրեց համեղ սուրճով,
Եվ այնպիսի խոսքեր ասաց,
որ հիշում եմ բարի խղճով:
—Խաղաղությունն,—ասաց,—վեր է
ամեն վեճից՝ թեկուզ և լայն,
Վասն ամենո արժի վիճել,
բայց ոչ վասն խաղաղության:
Փոքր ազգերին մահ է, ավաղ,
թե պատերազմ լինի մի նոր:
Ափ մը սուրբ հող, կյանք մը խաղաղ—
այս է հային միշտ հարկավոր:
Ազգի կեսը ցրված է դեռ
ի սփյուռս ողջ աշխարհի,
Ոդիսևս է Սփյուռքը մեր,
կգա՝ թեկուզ գայթակղվի:
Խորհենք վասն բարության ծով՝
ի հայրենյաց մերոց այսօր.
Միշտ ազգովին մտածելով՝
ազգովին էլ կապրենք հզոր:
Զնմանվենք բնավ նոցա,
որ կվիճեն կայարանում,
Իսկ գնացքը կհեռանա՝
վիճողներին թողած տեղում:
Կա աշխարհում մի հայրենիք՝
մի Հայաստան Խորհրդային,
Եղբայրների հետ անառիկ
խոսք է ասում աշխարհներին:
Եվ թող հնչի լայնատարած
նրա խոսքը սիրով լեցուն.
—Խաղաղություն հեռավորա՜ց, մերձավորա՜ց,
Խաղաղությո՜ւն ամենեցուն...